

## Հետաքրքիր և իմանալ

### **Երկրորդ և երրորդ տիեզերական արագություններ**

Երբ մարմնի արագությունը հավասար է առաջին տիեզերական արագությանը, այն շրջանագծային ուղեծրով պտտվում է Երկրի շուրջը: Իսկ ի՞նչ տեղի կունենա, եթե նրա արագությունն աստիճանաբար մեծացնենք: Այդ դեպքում նախ նրա ուղեծիրը դառնում է էլիպս և, երբ արագությունը հավասարվում է որոշակի արժեքի, մարմինը հիպերբոլական ուղեծրով հեռանում է Երկրից: Այդ արագությունն անվանում են երկրորդ տիեզերական արագություն: Երկրորդ տիեզերական արագությունը՝ կմ/վ: Երրորդ տիեզերական արագությունն այն արագությունն է, որն անհրաժեշտ է հաղորդել մարմնին, որպեսզի այն հեռանա Արեգակից: Այդ արագությունը՝ կմ/վ: